

Անակնկալ բժշկական հաշիվների հետ կապված ձեր իրավունքներն ու պաշտպանությունները

Երբ դուք շտապ օգնություն եք ստանում կամ բուժում եք ստանում ցանցի մեջ չմտնող բժշկական ծառայություններ մատուցողի կողմից ներցանցային հաստատությունում, ներառյալ հիվանդանոցը կամ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնը, դուք պաշտպանված եք մնացորդային հաշիվ ներկայացումից: Նման դեպքերում ձեզանից չպետք է գանձվի ավելին, քան ձեր ծրագրի համավճարները, համատեղ ապահովագրությունը և/կամ կրճատվող գումարները:

Ի՞նչ է «մնացորդային հաշիվը» (որը հաճախ կոչվում է «անակնկալ հաշիվ»):

Երբ այցելում եք բժշկի կամ այլ բուժաշխատողի, դուք կարող եք վճարել որոշակի կանխիկ ծախսերի համար, ինչպես օրինակ՝ համավճարը, համատեղ ապահովագրությունը կամ կրճատվող գումարը: Եթե այցելեք այնպիսի ծառայություն մատուցողի կամ առողջապահական հաստատություն, որը ձեր առողջապահական ծրագրի ցանցում չէ, դուք կարող եք ունենալ լրացուցիչ ծախսեր կամ ստիպված լինեք վճարել ամբողջ հաշիվը:

«Ցանցից դուրս» նշանակում է այն ծառայություն մատուցողները և հաստատությունները, որոնք ծառայություններ մատուցելու համար պայմանագիր չեն կնքել ձեր առողջապահական ծրագրի հետ: Ցանցից դուրս ծառայություն մատուցողներին կարող է թույլատրվել հաշիվ ներկայացնել ձեզ՝ ձեր պլանի վճարած գումարի և ծառայության համար գանձվող ամբողջ գումարի տարբերության համար: Սա կոչվում է «մնացորդային հաշիվ»: Այս գումարը, ամենայն հավանականությամբ, ավելին կլինի, քան նույն ծառայության համար պահանջվող ներցանցային ծախսերը և կարող է չհաշվառվել ձեր պլանի կրճատվող գումարի կամ տարեկան կանխիկ ծախսերի սահմանաչափի մեջ:

«Անակնկալ հաշիվը» անսպասելի մնացորդային հաշիվն է: Դա կարող է տեղի ունենալ, երբ դուք չեք կարողանում վերահսկել, թե ով է ներգրավված ձեր բժշկական ծառայության մեջ, օրինակ՝ երբ, դուք արտակարգ իրավիճակի մեջ եք կամ, երբ այցելություն եք պլանավորում ներցանցային հաստատություն, բայց անսպասելիորեն բուժումը ստանում եք ցանցից դուրս բժշկական ծառայություն մատուցողի կողմից: Անակնկալ բժշկական հաշիվները կարող են հազարավոր դոլարներ արժենալ՝ կախված պրոցեդուրայից կամ ծառայությունից:

Դուք պաշտպանված եք մնացորդային հաշիվների ներկայացումից հետևյալ ծառայությունների դեպքում.

Շտապ օգնության ծառայություններ

Եթե դուք արտակարգ բժշկական վիճակի մեջ եք և շտապ օգնության ծառայություններ եք ստանում ցանցից դուրս գտնվող ծառայություններ մատուցողից կամ հաստատությունից, առավելագույն հաշիվը, որը նրանք կարող են ձեզ ներկայացնել՝ դա ձեր ծրագրի ներցանցային ծախսերի կիսման գումարն է (օրինակ՝ համավճարները, համատեղ ապահովագրությունը և կրճատումները): Ձեզ չեն կարող ներկայացնել մնացորդային հաշիվ այս շտապ օգնության ծառայությունների համար: Սա ներառում է ծառայությունները, որոնք կարող են մատուցվել ձեզ այն բանից հետո, երբ դուք կայուն վիճակում լինեք, եթե գրավոր համաձայնություն չտաք և չհրաժարվեք ձեր պաշտպանությունից, որպեսզի ձեզ չներկայացվի մնացորդային հաշիվ այս հետևյալումնացման ծառայությունների համար:

Կալիֆորնիայի օրենսդրությանը վերաբերող տեղեկությունները տես ստորև:

Որոշակի ծառայություններ ներցանցային հաստատությունում, այդ թվում նաև՝ հիվանդանոցում կամ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնում

Երբ դուք ծառայություններ եք ստանում ներցանցային հաստատությունից, այդ թվում նաև՝ հիվանդանոցից կամ ամբուլատոր վիրաբուժական կենտրոնից, որոշ ծառայություն մատուցողներ կարող են ցանցից դուրս լինել: Այս դեպքերում, առավելագույն հաշիվը, որ այդ ծառայություն մատուցողները կարող են ձեզ ներկայացնել՝ դա ձեր ծրագրի ներցանցային ծախսերի կիսման գումարն է: Սա վերաբերում է շտապ բուժօգնության, անզգայացման, պաթոլոգիայի, ռադիոլոգիայի, լաբորատորիայի, նեոնատոլոգիայի, վիրաբույժի օգնականի, հոսպիտալիստի կամ ինտենսիվ ծառայություններին: Այս ծառայություն մատուցողները չեն կարող ձեզ ներկայացնել մնացորդային հաշիվ և չեն կարող խնդրել ձեզ հրաժարվել ձեր պաշտպանություններից՝ մնացորդային հաշիվ ներկայացնելու համար:

Եթե դուք այլ տեսակի ծառայություններ եք ստանում այս ներցանցային հաստատություններում, ցանցից դուրս ծառայություն մատուցողները չեն կարող մնացորդային հաշիվ ներկայացնել ձեզ՝ մինչև դուք գրավոր համաձայնություն չտաք և չհրաժարվեք ձեր պաշտպանություններից:

Ձեզանից երբեք չի պահանջվում հրաժարվել մնացորդային հաշվի ներկայացման ձեր պաշտպանություններից: Ձեզանից նաև չի պահանջվում ստանալ ցանցից դուրս բուժօգնություն: Դուք կարող եք ընտրել որևէ ծառայություն մատուցող կամ հաստատություն ձեր ծրագրի ցանցում:

Կալիֆորնիայի օրենսդրությանը վերաբերող տեղեկությունները տես ստորև:

Երբ մնացորդային հաշվի ներկայացումը չի թույլատրվում, դուք ունեք նաև այս պաշտպանությունները.

- Դուք պատասխանատու եք միայն ծախսերի ձեր մասնաբաժնի վճարման համար (օրինակ՝ համավճարները, համատեղ ապահովագրությունը և կրճատվող գումարները, որոնք դուք կվճարեիք, եթե ծառայություն մատուցողը կամ հաստատությունը ցանցում լիներ): Ձեր առողջապահական ծրագիրը կվճարի լրացուցիչ ծախսերն անմիջականորեն ցանցից դուրս գտնվող ծառայություն մատուցողներին և հաստատություններին:
- Ընդհանուր առմամբ, ձեր առողջապահական ծրագիրը պետք է.
 - Վճարի շտապ օգնության ծառայությունները՝ չպահանջելով, որ դուք նախապես հաստատեք ծառայությունները (նաև հայտնի է որպես «նախնական թույլտվություն»):
 - Վճարի ցանցից դուրս ծառայություն մատուցողների կողմից տրամադրվող շտապ օգնության ծառայությունները:
 - Հիմնավորի, թե ինչ եք պարտք ծառայություն մատուցողին կամ հաստատությանը (ծախսերի կիսում) այն բանի վրա, թե ինչ է նա վճարելու ներցանցային ծառայություն մատուցողին կամ հաստատությանը և ցույց տա այդ գումարը ձեր նպաստների բացատրության մեջ:
 - Հաշվի բոլոր գումարները, որոնք վճարում եք շտապ օգնության ծառայությունների կամ ցանցից դուրս ծառայությունների համար՝ ձեր ներցանցային կրճատվող և կանխիկ ծախսերի սահմանաչափի մեջ:

Կալիֆորնիայի օրենսդրությունը. Կալիֆորնիայի օրենսդրությունը սովորաբար պարունակում է մնացորդային հաշվի ներկայացման պաշտպանություններ, որոնք նման են «Առանց անակնկալների օրենքին» (ինչպես նկարագրված է սույն ծանուցման մեջ), բացառությամբ, որ մնացորդային հաշվի ներկայացման արգելքները կիրառվում են նաև ներցանցային լրացուցիչ հաստատություններում, այդ թվում նաև՝ լաբորատորիաներում կամ ռադիոլոգիական կենտրոններում, ստացված ծառայությունների հանդեպ: Կալիֆորնիան ունի նաև վեճերի լուծման անկախ գործընթաց՝ պահանջների հետ կապված խնդիրները լուծելու համար, ներառյալ ձեր ծառայություն մատուցողի հետ ծագած վեճերը՝ կապված ոչ պատշաճ մնացորդային հաշիվների ստացման հետ, որը կարող է նախաձեռնվել Կալիֆորնիայի ապահովագրության դեպարտամենտի միջոցով:

Եթե դուք գտնում եք, որ ձեզ սխալ հաշիվ են ներկայացրել, դիմեք HHS-ի Առանց անակնկալների սպասարկման կենտրոն՝ **1-800-985-3059** հեռախոսահամարով, որը պատասխանատու կազմակերպությունն է դաշնային մնացորդային հաշիվների կամ անակնկալ հաշիվների ներկայացման պաշտպանության մասին օրենքների իրականացման համար: Տեղեկությունների և բողոքների համար դաշնային հեռախոսահամարն է՝ **1-800-985-3059**: Դաշնային օրենսդրությամբ սահմանված ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք www.cms.gov/nosurprises/consumers վեբկայք:

Կալիֆորնիայի օրենսդրությամբ նախատեսված ձեր իրավունքների մասին լրացուցիչ տեղեկությունների համար, ներառյալ, թե ինչպես սկսել վեճերի լուծման գործընթացը, դիմեք Ապահովագրության դեպարտամենտի օգնության կենտրոն հետևյալ էջում՝ www.insurance.ca.gov/01-consumers/101-help/index.cfm, կամ զանգահարեք **1-800-927-4357** հեռախոսահամարով, որը պատասխանատու կազմակերպությունն է նահանգային մնացորդային հաշիվների կամ անակնկալ հաշիվների ներկայացման պաշտպանության մասին օրենքների իրականացման համար:

ԱՅՍ ՆԱՄԱԿԸ ՀԱՇԻՎ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ: ԴՈՒՔ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՉԵՔ ՁԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂԻՆ ՈՐԵՎԷ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ, ՄԻՆՉԵՎ ՉՍՏԱՆԱՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՁԵՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ՝ ՆԵՐՑԱՆՑԱՅԻՆ, ԾԱԽՍԵՐԻ ԿԻՍՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՈՒՆԵՆԱԼ:

Այս ծանուցումը հասանելի է տասնչորս (14) լրացուցիչ լեզուներով, ներառյալ այս լեզուն, և տեղադրված է հետևյալ էջում՝ CityofHope.org/nosurprisebilling.

